

տի լիներ : Մեր ամենուն պարոքն է ուրեմն պոշտապահնել արքունուսուստ շը- նորհեալ արտօնութիւններն և ազգա- յին օրէնքն ամեն յեղակարծ պատահ- մանց դէմ . և ասաար կանդնիլ ազգա- յին օրինաւոր իշխանութեան որ միայն բոլոր Հոյոց բարոյական աջակցու- թեամբը կարող է զօրանալ և յայտ- նապէս յօդուտ ազգին գործելու սահի- սպուին :

ԱՐԵԽԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ՄԱԱԿԱՆՔ ԵՒ ԹԱԻԽԱԲՈՐ

Ոսւսիս լայնածաւալ աէրութեան մէջ թէ բազմաթիւ ազգեր կան եւ թէ գաւանութեան կողմէն շատ բա- ժանումներ : Որչափ որ Ռուսիս աէ- րութեան գլխաւոր նորատակն է ամեն ազգեր , լեզուներ , գաւանութիւններ ՚ի մի ձուլել , ըստ կտակի Մեծին Պետ- րոսի . բայց կան տակաւին նոյն իսկ ազգու Ռուս եւ Ռուսախօս հերձ- ուածներ , որոնք Ռուսիս եկեղեցւոյ դաւանութենէն արտաքոյ նոր գաւա- նութիւններ ունին , եւ այն բաժա- նումներն որչափ որ հալածանքներ կը- րած են և կը կրեն , գարձեալ կը յա- րատեւեն իրենց ընթացքին մէջ : Այս հերձուածներն շատ են , բայց մէնք երկուքին վերսոյ միայն համառօս տե- ղեկութիւն պիտի տանք , որոնք շատ հետաքրրական են և շատերուն գրե- թէ անծանօթ , ինչպէս որ անծանօթ են Ռուսասաանի անդնդախոր ծոցին մէջ գտնուած բազմաթիւ ազգայնու- թեանց ցեղական եւ բարոյականու- թեան կեանքն ու կենցաղն :

Այս երկու բաժանուածներն են Մալականք , (կաթնակերպ) և Պուխաբօք , (հոգւով մարտնչողք) : Սոքա Ռուսիոյ եկեղեցիէն բաժնուեցանայի ժամանակի երբ 1654 թուականին , Ալեքսի Սի- խայէլսլիցի հրամանաւ , Նիկոլ Պատ- րիարքին Վինօդ կազմեց և սկսաւ Ասո- ուածաշունչն և Եկեղեցւոյ արարողու- թեան գրեերն քննութեան առնուլ և սրբագրել :

Սոյն հերձուածներն , որ զիրենք Ստարլ վերջի կ'անուաննեն , այսինքն հնա- ւանդ հաւատոյ հետեւողք , սաստիկ կերպիւ ընդդիմացան և ամենեւին ը- կամեցան ընդունիլ Պատրիարքի սրբ- բագրութիւնն , պնդելով , որ արարո- ղական գրքերու մէջ վասիստութիւն- ներ մատած են , և այս տեղէն յառաջ եկաւ բաժանուածն կամ հերձուածն : Մեծն Պետրոս ջանաց Ռուսիոյ տիրող եկեղեցւոյն հպատակեցնել բայց հո- լածանաց սաստիկ միջոցներն անօգուտ եղան և հերձուածն զօրացաւ :

Նիկողայոս Կոյորն ևս Մեծին Պետ- րոսի փորձն փորձեց և հզօր ընդդիմա- զրութիւն տեսնելով հերձուածողաց մեծ մասն աքսորեց Անդրկովկասեան երկիրներն , որպէս զի տառապանքէ և չբաւորութենէ ատիպեալ հպատա- կին իշխող եկեղեցւոյն : Սակայն նոքա- ման տառապանք , բայց , մերկու- թիւն , մուրացկանութիւն և թափա- ռականութիւն յանձն առին և ամե- նեւին ըշեղեցան իրենց ընթացքէն : Սոյն աքսորականներն այն ժամանակէն ՚ի վեր բնակութիւններ հաստատած են Անդրկովկասեան երկիրներու մէջ և կը յարատեւեն իրենց գաւանանքին վերայ :

Մալականներն գրեթէ Ռուսիոյ Քուաքրներն են . Ռուսիոյ եկեղեցւոյն ծէսերն եւ արարողութիւններն չ'են ընդունիր , խանդարետլ կարծելով .

բայց դաւանութեան կողմէն շատ չ'են տարբերիր : Մաքսուր կեանք ու վարք ունին , և շատ աշխատասէր են , որով և այժմ անկարօտ կ'առըրին : Աւելատրանն բառական կերպիւ կ'ընդունին , ամենեւին մեկնութիւն չ'են տար . եօթն խորհուրդներն բոլորավնն հոգեւոր իմաստով կ'ըմբռնեն , առանց երբէք նիւթական և տեսանելի արարողութեան : Խւրաբանշխւր որ քահանայ կը համարուի և քահանայունն ուժիւրան չ'է , եթէ ոչ , Ա . Գիրք կարդալ ժողովրդեան առջեւ : Խւրաբանշխւր ընտրուած քահանայ սոյն պաշտօնն կը վարէ մի կամ երկու տարի , և ապա այլք իրեն կը յաջորդեն :

Դուխաբօրներու հաւատոց վարդապետութեանց մէջ շատ նմանութիւններ կան նախնի հերձուածոց : Երրորդութիւնն կ'ընդունին , բայց ըդ հայր կը համարին լցու , զիրդին՝ կեանք , խակ զշորին Սուրբ՝ խաղաղութիւն: Հայրն կը յայտնուի մարդոցն յիշողութեան միջոցաւ , Որդին՝ իմացականութեան , խակ հոգին Սուրբ՝ կամաց : Կը հաւատան հոգւոց յառաջադոյն դոյցութեանն և մարդոց անկմանն և սյն պէս կ'ընդունին , որ հոգին դրուած է մարմնոց մէջ իւր մեղքն քաւելու համար : Հետեւապէս , երբ Ադամ երեւեցաւ երկիր վերայ , շփոթ յիշողութիւն ունէր վերին աշխարհի . միտքն խաւարած էր և կամքն՝ ապրատամք : Նա չը կարողացաւ փորձութեան դիմադրել և նորէն մեղանշեց . նորա մեղքն իւր սերունդին չ'անցնիր : Հոգին հակամիտ է չարութե՛ և սորադատանէ մարդոց առաջին անկումն : Աշխարհաքաւութեանն և մաքրութեան տեղի է , ուր մարդն աղատութիւ բարի գործելով պէտք է թողութիւն ստանայ իւր այն հին մեղաց , որով իւր անձն աւելի սիրեց քան զԱստուած :

Յիսուս Քրիստոս , որ Որդի Աստությէ և Աստուած , մարմնացաւ , որ մարդուն առաջնորդէ և օգնէ սոյն փորձութեան և քաւութեան մէջ : Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւններն սպարունակուած են Ա . Գրոց մէջ , բայց այնպէս խորհրհաւոր են , որ մի սոյն Գուխաբօրներուն արտուած է հասկանալ , խակ նորաձեւ Ռուսներն զուրկ են այս շնորհքէն : Այս է ահա Գուխաբօրներու գաւանութիւնն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Հունդարիոց Պ' շո քաղաքէն Հայագգի տիկին մի ուխտաւորութեան եկաւ 'ի Ա . Երուսաղէմ իւր 18 ամեայ զաւակին հեետ միասին : Վայ առաջին անգամն է որ Հունդարացի ազգայիններէն ուխտաւոր կ'ունենայ Ա . Եմոռս : Յիշեալ Հայագգի Տէկինն մաքուր Հայերէն կը խօսի եւ սրտաշարժ տեղեկութիւններ կը պատմէ մեր Հունդարացի ազգայնոց վերայ , այնպիսի տեղեկութիւններ , ուրոնք միխթարական են և տրտմական : Ոխիթարական , որովհետեւ Հայութիւնն տակաւին կը պահպանուի յիշեալ երկրին մէջ , տրտմական՝ որովհետեւ բնաւ տեղեկութիւն չունին մեր Կաթողիկոսական և Պատրիարքական Եթոռոց վերայ , մեր Երուսաւտանի , Տաճկաստանի , Պարսկաստանի և Հնդկաստանի տղայնոց վերայ , մեր ազգային Արքութեան վերայ ,